

«Մորտել» եւ «Որեւար» բառերի ստուգաբանութեան առթիւ.

«Արարատ» ամսաթերթի սոյն տարուայ փետրուարի համարում պ. Հ. Աճառեանը առաջ բերելով «մորտել» բառի ստուգաբանութիւնը աւելացնում է թէ «Ղարաբաղի բարբառով մորտել կը նշանակէ «կրծեւ, կրծելով ուտել»։ Պ. Հ. Աճառեանին, իբրեւ Ղարաբաղի բարբառի ուսումնասիրողի, պէտք է յայտնի լինի, որ Ղարաբաղի բարբառը ունի մի քանի տեղական ստորբաժանումներ կամ տեղական ձևափոխութիւն (говоръ) և որ մի տեղի ձևափոխութեան մէջ գործածական են այնպիսի բառեր, որոնք նոյն բարբառի մի այլ ձևափոխութեան մէջ գոյութիւն չունին, հետեապէս թիւրիմացութեան տեղիք չը տալու համար անհրաժեշտ է նշանակել թէ Ղարաբաղի բարբառի ո՞ր ստորբաժանման մէջ է գործածական «մորտել» բառը վերոյիշեալ նշանակութեամբ։ միւս կողմից գրականապէս կարող եմ ասել, որ Ղարաբաղի բարբառի մէջ ամենեւին գոյութիւն չունի «մորտել» բառը ոչ թէ միայն «կրծել» նշանակութեամբ, այլ առհասարակ իբրեւ գործածական բառ։ «Մորտել» բառի իմաստը պարզ կացուցանելու համար նա օրինակ է բերում «մուկը շաքար է մորտում» նախադասութիւնը, որը իւր կազմութեան և հնչիւնների արտասանութեան տեսակէտից երբէք Ղարաբաղի բարբառին յատուկ չէ։

Ինչ վերաբերում է «որեւար» ստուգաբանութեան, դա վաղուց ի վեր արդէն յայտնի է. ի գուր պ. Հ. Աճառեանը նեղութիւն է յանձն առել իրան վերագրելու այդ բառի ստուգաբանութիւնը և համեմատելով վրացերէն «էրի» բառի հետ ակնյայտնի թիւրիմացութեան մէջ է ընկել։ Առաջին անգամ «որեւար» բառի ճիշտ ստուգաբանութիւնը տուել է պրօֆ. Ն. Ե. Մառը իւր «Граммати́ка Дре́вне-Армянска́го Язы́ка» գրքի մէջ էջ 97, ուր յարգելի ուսուցչապետը խօսելով գրաբարի յոգնականացուցիչ մասնիկների մասին ի միջի այլոց բերում է և «եար» զուգընթաց «նեար» մասնիկը. նրա բերած օրինակների մէջ ա-ին տեղն է բռնում «աւրեար» կամ «որեւար» բառը, որը նշանակում է ոչ թէ սոսի «մարդիկ» ինչպէս պ. Հ. Աճառեանն է հասկանում (նոյնպէս և Հայկազեան Բառարան կազմողները), այլ «ազնուական տոհմից» «նշանաւոր, երեւելի» մարդիկ. ահա այս իմաստով գործ է ածուած Ծննդոց Գրքի գլ. 17. 21, 22, 18. 24, իսկ Աղաթանգեղոսի և Կորնիւնի մէջ սրոշակի ասուած է «ընթացեալք ի յառաջ որերոյն»,

«*Վերջահունեացն տոհմի որեարս»* և այլն, որոնցից շատ պարզ երևում է, որ «*որեար»* բառը երբէք սոսկ մարդիկ չէ նշանակում: Իսկ թէ դրաբարի «*եար»* յոգնականացուցիչ մասնիկից է կազմուել աշխարհաբարի «*եր»* յոգ. մասնիկը այդ էլ վաղուց է վեր յայանի է պ. ն. Մառի վերոյիշեալ քերականութիւնից (էջ 97.), ուր մանրամասն ցոյց է տուած այդ բոլորը: Պ. Ն. Աճառեանը «*որեարի»* «*որ»* արմատը համեմատում է վրացերէն «*էրի»* կամ «*հէրի»* բառի հետ, որ նրա կարծիքով, դարձեալ մարդիկ, ժողովուրդ է նշանակում, այսպէս պարզ երևում է, որ պ. Ն. Աճառեանի համար ոչ միայն պարզ չէ եղել հայերէն «*որեար»* բառի նշանակութիւնը, որ ոչ մի դէպքում «*ժողովուրդ»* նշանակութեամբ դործ չէ անուել, այլ նաև վրացերէն «*էրի»* բառի պատմական անցեալը, որն արդէն կատարելապէս բացատրուած է: Ի. Զաւախովը իւր Государственный строй древней Грузии и древней Армении գրքի էջ 62—64 մանրամասն առաջ բերելով թէ վրացերէն և թէ հայերէն աղբիւրներից հատուած՝ տալիս է «*էրի»* բառի իսկական պատմական նշանակութիւնը, որից պարզ երևում է, որ հայերէն «*որեարը»* ոչ մի առնչութիւն չունի վրացերէն «*էրի»* կամ «*էրնի»* բառի հետ, այսպէս Մատթէոսի Աւետ. գլ. 2. 47, 55, Մարկոսի գլ. ԺԴ. 43, իւր հայերէն թարգմանութեան համապատասխան տեղը արտայայտած է «*ամբոխ»* կամ «*ժողովուրդ»* բառերով: Վրաց հին դրականութեան մէջ «*էրի»* բառը շատ յաճախ դործ է անուում «*զօր»* «*զօրական»*, «*զօրք»* բառերով, այսպէս «*ամիէրիրդան էրի»* կրեբաղ» հայերէն թարգմանուած է «*այնուհետև զօրս գումարեալ»* (Սովեբք Հայկ. Ը. XIX էջ 34): «*համար առնէր զօրացն»* վրացերէն «*զօրացն»* արտայայտած է «*էրիա»* (նոյն տեղ էջ, 39): Աւետարանի մէջ, ուր հայերէն պատահում է «*զօր»* վրացերէնի համապատասխան տեղում գտնում ենք «*էրի»* բառը (Մատթէոսի գլ. Ը. 9, ԻԸ. 12, Յովհաննու գլ. ԺԹ. 2, 32, 34, Ղուկասու գլ. ԺԳ.): «*Միւս կողմից վրացերէն «էրի» բառից է բաղադրուած «էրիսթալի»* զատ և միակ վրացերէն տեքմիւնը, որը նշանակում է «*զօրավար»* կամ «*սպարապետ»* (Սովեբք Հայկ. Ը. XIX էջ 41, 42): Այս բացատրութիւնից արդէն պարզ է, որ «*էրի»* բառը ոչ մի առնչութիւն չունի «*որեար»* բառի հետ և որ պ. Ն. Աճառեանի համեմատութիւնը ոչ մի պատմական փաստի վերայ հիմնուած չէ: Անշուշտ շատերի համար զարմանայի կը թուայ այն հանգամանքը, որ «*որեար»* բառի ոտուգաբանութիւնը և աշխարհաբարի «*եր»* յոգ. մասնիկի ծա-

գումը արդէն 7-8 տարի է, որ յայտնի է հայադէտներին պ. Ն. Մառի հայերէնի քերականութիւնից, որը թէև ուսանելի չէր ունիւմ է դրած, բայց բերած օրինակները բոլորը հայերէն լեզուով են, ուրեմն էլ ի՞նչ կարելի կար դարձնել նոյնը կրկնել այլ ես անհիմն բացատրութեամբ և սխալ համեմատութեամբ, բայց այդ ցաւալի հանդամանքը նորից գալիս է յիշեցնելու մեզ մեր ուսումնասիրութիւնը, որն ունի իւր պատմական տխուր անցեալը, մեր մէջ իրանց հայադէտ յարջոյններն անդամ նեղութիւն չեն յանձն առնում հետաքրքրուելու նոյն իսկ այնպիսի մի անհրաժեշտ գրքի հետ, որպիսին է պ. Հ. Մառի հայերէնի քերականութիւնը, որը իւրաքանչիւր հայերէն լեզուի ուսուցչի անբաժան ընկերը պիտի լինի, բայց ցաւալի է նկատել և մինչև իսկ ամօթ է մեզ համար առանձնապէս յիշատակել, որ այդ վերին աստիճանի օգտակար գրքից մինչև այժմ կողկասում տարածուել է միմիայն 15 օրինակ, այն ևս օտարներին շրջանում. այդ թիւն արդէն պարզ ցոյց է տալիս, թէ ինչպէ՞ս են հետաքրքրուում հայոց լեզուի ուսուցիչները իրանց մայրենի լեզուի ուսումնասիրութեան հարցով. այդ անհետաքրքրութիւնն է գլխաւոր պատճառ այն չարիքի, որ մենք անտես ենք առնում, ի վնաս մեր իսկ շահերի, այն ամենը, ինչ որ մեր պատմական անցեալին է վերաբերում:

Առ. Նահապարեան.

Պետերբուրգ.

